ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 06 2024 թ.
№ ԲԿԵՊ-24/4-831

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 03524692
ՀՀ, ք. Աբովյան Հատիսի 1/96
հեռ. +37493 68 00 06
էլ. հասցեն՝ vip-consalt@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության միջև 16.08.2018թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-10/14-1 ծածկագրով գնման պայմանագրի և պայմանագրին կից 03.03.2023թ. կնքված N 5 համաձայնագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 15-ը կատարել 10,000,000 (տասն միլիոն) ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից ընդհանրապես աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագր 3.1.4. կետի «ա» ենթակետը՝ (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար) և «բ» ենթակետը՝ (Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունիսի 4-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 10,000,000 ՀՀ դրամի չափով չկատարված և 40 ՀՀ դրամի չափով դեռևս չնախատեսված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 520,000 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 13.05.2024թ. և 50,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև 39,507,000 ՀՀ դրամը, որպես պայմանագրի կատարման ապահովում, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձեռնարկվել են միջոցներ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ